Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 24-06-2025 թ. որոշմամբ
««ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ՇԵՆԳԱՎԻԹ ՇԵՆԳԱՎԻԹ ԹԱՂԱՄԱՍ ՀՐԱՆՏ ՎԱՐԴԱՆՅԱՆ Փ. 6
1.3 Պետական գրանցման համարը		222.160.965991
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2017-07-06
1.5 ՀՎՀՀ-ն		02269952
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)91011770
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		info@vardanyan-himnadram.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
Կարեն Վարդանյան		
Միքայել Վարդանյան		
Զինա Մուրուզյան		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Կարեն Վարդանյան		
Միքայել Վարդանյան		
Զինա Մուրուզյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արամ Ղազարյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	23	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը		
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ		
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Դրամաշնորհներ և անվճար դրամական մուտքեր		
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		

MARGARYAN ARTUR 2707780081
Digitally signed by MARGARYAN ARTUR 2707780081
Date: 2025.06.24 12:41:22 AMT

9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	2,119,671,340	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Երևանի 2800-ամյակի այգու տարածքի սպասարկում և խնամքի իրականացում	278,341,922	
Սուրբ Թադևոս եկեղեցու տարածքում ընթացիկ և կապիտալ շինարարական աշխատանքների կատարում	74,596,853	
Լսողական սարքերի նվիրաբերում ծրագրի շրջանակներում ապրանքների ձեռքբերում	60,780,912	
Աջակցություն <<Արմավիրի Տիգրան Մեծի անվան ռազմամարզական հատուկ վարժարան>> ՊՈԱԿ-ին	70,152,026	
Աջակցություն <<Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտացված վարժարան>> ՊՈԱԿ-ին	48,609,797	
Արարատի մարզի Մասիս համայնքին խաղահրապարակի նվիրաբերում	4,000,000	
Տավուշի մարզի Բերդ, Իջևան և Նոյեմբերյան համայնքներում գազաֆիկացման և ջրամատակարման ցանցի վերակառուցման և ընդլայնման աշխատանքների համաֆինանսավորում	113,963,618	
ՀՀ ԱՆ <<Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն>> ՓԲ ընկերությանը բժշկական սարքավորումների նվիրաբերում	117,324,380	
<<ԱՅԲ>> կրթական հիմնադրամին դրամական նպատակային նվիրաբերություն	7,279,560	
<<Սիթի օֆ Սմայլ ժպիտների քաղաք>> ԲՀ-ին նպատակային նվիրատվություն	5,000,000	
<<Փրկություն հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն>> ԲՀԿ-ին ն նվիրատվություն	3,000,000	

<<Վիքիմեդիա Հայաստան>> Գիտական Հասարակական Կազմակերպությանը նպատակային նվիրատվություն,	2,400,000
<<Իմ Քայլը>> ԲՀ-ին նպատակային նվիրաբերություն	20,000,000
<<Հայ մայրեր>> բարեգործական հիմնադրամին Ամանորի կապակցությամբ հրուշակեղենի նվիրատվություն	1,714,600
Արտամարմնային բեղմնավորման համար աջակցություն	31,764,750
Նյութի հեռարձակում	66,719,250
Գրանդ Հոլդինգի աշխատողներին Ամանորի կապակցությամբ հրուշակեղենի նվիրատվություն,	46,089,380
Գրանդ Հոլդինգի աշխատողներին Հրանտ Վարդանյանի 75 ամյակի կապակցությամբ փոստային նամականիշերի, բուկլետների և կոնֆետատուփերի նվիրատվություն	153,256,836
Սոցիալապես անապահով ընտանիքներին անշարժ գույքի, կահույքի, կենցաղային տեխնիկայի նվիրատվություն	321,072,213
Գյուղատնտեսական սարքավորումներ գյուղացիներին աջակցելու նպատակով նվիրատվություն	313,146,000
Բարերար ԷՅԷՄ կայքի և բջջային հավելվածի զովազդային առաջխաղացման և հանրայնացման ծախսեր, վերոնշյալ ծրագրի շահառուների սոցիալական կարիքները հանրությանը ներկայացնելու նպատակով ծախսեր	27,696,634
ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքին տրանսպորտային միջոցի նվիրատվություն	7,798,000
Վահան Վլադիմիրի Վարդապետյանին նվիրատվություն	1,000,000
Մեսրոպ Լևոնի Մովսիսիյանին նվիրատվություն	1,000,000
Կարինե Լևոնի Մովսիսիյանին նվիրաբերություն /փոխնակ մոր ծառայությունից օգտվելու նպատակով/	3,630,570
Սեդա Վարդանյանին կոնքազդրային հոդի իմպլանտի հավաքածուի նվիրատվություն	1,264,000
Բարեգործական կազմակերպությունների կողմից հովանավորվող մանկական հաստատությունների երեխաներին հունիսի 1- ի կապակցությամբ քաղցրավենիքի նվիրատվություն	1,940,375
Հրանտ Վարդանյան փողոցի վերանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ	2,060,000
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	1,918,138,544

13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	1,785,601,676

Նշումներ՝

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ ____17____ էջերից:
էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

31 ԴԵԿՏԵՄԲԵՐ 2024թ.

PROGRESS AUDIT

ԵՐԵՎԱՆ 2025

Բովանդակություն

	էջ
Անկախ աուդիտորի եզրակացություն	3-5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	7
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ	9

PROGRESS AUDIT

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ և
ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ
ՀԳԳՀ # 1 20 0333

«ՊՐՈԳՐԵՍ-ԱՈՒԴԻՏ» ՓԲԸ
ՀՀ, ք. Երևան, Վ. Սարգսյան 26/3

Անկախ Աուդիտորի Եզրակացություն

Վարդանյան Ընտանիք
Բարեգործական Հիմնադրամ
Հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Վարդանյան Ընտանիք» Բարեգործական Հիմնադրամի (Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում՝ այդ հաշվետվությունները ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով արժանահավատ են և տալիս են ճշմարիտ ու իրական պատկերը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամի ֆինանսական վիճակի, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների և դրամական միջոցների հոսքերի մասին՝ համաձայն ֆինանսական հաշվետվությունների Միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք զերծ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու, ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Հիմնադրամը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:
Կառավարման օղակներում ներգրավված անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիքներ՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցրած կարող են ազդել այդ ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրանց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք՝

- Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսացող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ

հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:

- Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Հիմնադրամի ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարած հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Հիմնադրամի անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Հիմնադրամը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:
- Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը, և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորած շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

24 Հունիսի 2025թ.

Ռուզաննա Արզումանյան

Գլխավոր տնօրեն/Առաջադրանքի ղեկավար

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

31 դեկտեմբերի 2024թ.

(հազար դրամ)

	Ծանոթագրություն	***31 դեկտեմբեր 2024***	***31 դեկտեմբեր 2023***
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	34,251	41,313
Ոչ նյութական ակտիվներ	5	7,246	148
		41,497	*41,461*
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	6	417,016	249,761
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	7	21,305	11,927
Դրամական միջոցներ	8	366,024	151,269
		804,345	*412,957*
Ընդամենը ակտիվներ		**845,842**	**454,418**
Զուտ կապիտալ		-	-
		-	-
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	41,497	41,461
		41,497	*41,461*
Ընթացիկ պարտավորություններ			
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	9	28,493	17,743
Ընթացիկ շնորհներ	10	773,466	393,857
Շահութահարկի գծով պարտավորություն		2,386	1,357
		804,345	*412,957*
Ընդամենը պարտավորություններ		**845,842**	**454,418**

Արամ Ղազարյան
Տնօրեն

Արթուր Մարգարյան
Գլխավոր հաշվապահ

Վավերացման ամսաթիվ 24/06/2025թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ

	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ շնորհներից	11	1,740,028	1,138,196
Ծրագրային ծախսեր	12	(1,615,046)	(1,003,535)
Վարչական ծախսեր	13	(128,284)	(132,900)
Գործառնական այլ եկամուտներ		728	8,087
Գործառնական այլ ծախսեր		(3,350)	(6,249)
		(5,924)	*3,599*
Ֆինանսական եկամուտ (ծախս)	14	12,527	5,701
Այլ ոչ գործառնական եկամուտ (ծախս)	15	(4,217)	(7,943)
Շահութահարկի գծով (ծախս) փոխհատուցում	16	(2,386)	(1,357)
Տարվա զուտ արդյունք		-	-
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		**-**	**-**

Արամ Ղազարյան
Տնօրեն

Արթուր Մարգարյան
Գլխավոր հաշվապահ

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

հազար դրամ

	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից		6,249
Դրամաշնորհներից	2,119,671	1,354,360
Գործառնական գործունեությունից այլ մուտքեր	722	1,825
Ընդամենը գործառնական գործունեությունից մուտքեր	**2,120,393**	**1,362,434**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Գնումների գծով	(1,796,321)	(1,141,042)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(79,502)	(74,738)
Վճարումներ բյուջե	(21,818)	(50,534)
Գործառնական գործունեությունից այլ ելքեր	(4,949)	(4,985)
Ընդամենը գործառնական գործունեությունից ելքեր	**(1,902,590)**	**(1,271,299)**
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***217,803***	***91,135***
Ներդրումային գործունեությունից մուտքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	-	-
Շահաբաժինների և տոկոսների ստացումից	12,527	5,701
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	**12,527**	**5,701**
Ներդրումային գործունեությունից ելքեր		
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերման գծով	(10,403)	(4,677)
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	**(10,403)**	**(4,677)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***2,124***	***1,024***
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների մուտքեր		
Ֆինանսավորման այլ գործունեությունից մուտքեր	-	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից մուտքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների ելքեր		
Ֆինանսավորման այլ գործունեությունից ելքեր	-	-
Ընդամենը ֆինանսավորման գործունեությունից ելքեր	-	-
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	-	-
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	**219,927**	**92,159**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	(5,172)	(2,022)
Դրամական միջոցների տարեսկզբի մնացորդը	**151,269**	**61,132**
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջին	**366,024**	**151,269**

Արամ Ղազարյան
Տնօրեն

Արթուր Սարգսյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի այս ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող 9-ից մինչև 34-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

«Վարդանյան Ընտանիք» Բարեգործական Հիմնադրամ
2024թ.-ի դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա վերաբերյալ

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Վարդանյան Ընտանիք» Բարեգործական Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիրների կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2017 թվականի հունիսի 30-ին և գործում է ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, Հիմնադրամների մասին ՀՀ օրենքի, ՀՀ Միջազգային պայմանագրերի, իր կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

Գրանցվել է Հայաստանի Հանրապետության Իրավաբանական անձանց Պետական Ռեգիստրի կողմից՝ 2017թ. հուլիսի 06-ին, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (պետական գրանցման համարը՝ 222.160.965991, ՀՎՀՀ՝ 02269952):

Հիմնադրամի հիմնադիրներն են՝

- ✓ Կարեն Վարդանյանը,
- ✓ Միքայել Վարդանյանը,
- ✓ Զինա Մուրուզյանը:

Համաձայն կանոնադրության՝ Հիմնադրամի գործունեության նպատակներն են՝

- ՀՀ ֆիզիկական և իրավաբանական անձանց, օտարերկրյա քաղաքացիներին քաղաքացիություն չունեցող անձանց կենցաղային պայմանների բարելավում;
- ՀՀ սահմանամերձ գոտիներում բնակվող անձանց բնակության համար կենցաղային նպաստավոր պայմանների ստեղծում;
- Առողջապահության զարգացման աջակցություն;
- Պատերազմի և արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած անձանց նյութական աջակցության ցուցաբերում;
- Գիտության, կրթության, արվեստի գրականության սպորտի ոլորտների բարեգործական ծրագրերի իրականացման աջակցություն;
- Մանուկներին, հաշմանդամներին և սոցիալական անապահով խավերին աջակցություն:

Հիմնադրամի շահառուներն են՝

- ✓ ՀՀ սահմանամերձ գոտիներում բնակվող ՀՀ քաղաքացիներ, օտարերկրյա քաղաքացիներ; քաղաքացիություն չունեցող անձինք;
- ✓ Առողջապահության ոլորտում գործունեություն ծավալող իրավաբանական անձինք;
- ✓ Պատերազմի և արտակարգ իրավիճակների հետևանքով տուժած անձինք;
- ✓ Գիտության, կրթության, արվեստի, գրականության, սպորտի ոլորտներում գործունեություն իրականացնող իրավաբանական և ֆիզիկական անձինք;
- ✓ Մանուկներ, հաշմանդամներ և սոցիալապես անապահով ընտանիքների անդամները:

«Վարդանյան Ընտանիք» Բարեգործական Հիմնադրամի կողմից 2024 թվականին իրականացված և իրականացվող ծրագրերը հետևյալն են՝

1. «Երևանի 2800-ամյակի այգու տարածքի սպասարկում և խնամքի իրականացում» ծրագրի շրջանակներում ձեռքբերումների ընդհանուր գումարը կազմել է՝ 278,341,922 ՀՀ դրամ, որից այգու ընթացիկ սպասարկման ծախսերը կազմել են 94,688,922 ՀՀ դրամ;

2. ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի «Սուրբ Թադևոս» եկեղեցու տարածքում իրականացվել են 74,596,853 ՀՀ դրամ գումարի չափով շինարարական աշխատանքներ, ապրանքների և ծառայությունների ձեռքբերումներ, որի արդյունքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հանձնված չէ;

3. «ԱՅԲ» կրթական հիմնադրամին դրամական նպատակային նվիրաբերություն՝ 18,000 ԱՄՆ դոլարին համարժեք 7,279,560 ՀՀ դրամ գումարի չափով;

4. «Սիթի օֆ Սմայլ ժպիտների քաղաք» ԲՀ-ին նպատակային նվիրատվություն՝ 5,000,000 ՀՀ դրամ գումարի չափով;

5. «Հայ Մայրեր» բարեգործական հիմնադրամին ամանորի կապակցությամբ քաղցրավենիքի և հրուշակեղենի ձեռքբերում և նվիրատվություն՝ 1,714,600 ՀՀ դրամ գումարի չափով;

6. «Գրանդ Հոլդինգ»-ի աշխատակիցներին ամանորի կապակցությամբ սննդամթերքի և հրուշակեղենի ձեռքբերում և նվիրատվություն՝ 46,089,380 ՀՀ դրամ գումարի չափով;

7. «Իմ Քայլը» բարեգործական հիմնադրամին նվիրաբերություն՝ «Պատերազմի մասնակիցների մասնագիտական ներուժի բացահայտման», «Հորիզոններ» դուալ կրթական և «Քվանտային և մեզոսկոպիկ ֆիզիկայի» մասնագիտական կրթական ծրագրերի իրականացմանը աջակցելու նպատակով՝ 20,000,000 ՀՀ դրամ գումարի չափով;

8. «Վիքիմեդիա Հայաստան» գիտակրթական հասարակական կազմակերպությանը նվիրաբերություն՝ թվով 10 հատ դյուրակիր համակարգիչ ձեռք բերելու, ինչպես նաև ընթացիկ գործունեության ապահովման նպատակով՝ 2,400,000 ՀՀ դրամ գումարի չափով;

9. «Փրկություն հաշմանդամ երեխաների և երիտասարդների կենտրոն» բարեգործական հասարակական կազմակերպությանը նվիրաբերություն՝ ընթացիկ գործունեության ապահովման համար՝ 3,000,000 ՀՀ դրամ գումարի չափով;

10. Սեդա Վարդանյանին CORAIL Կոնքազդրային հոդի տոտալ էնդոպրոթեզի նվիրատվություն՝ 1,264,000 ՀՀ դրամ գումարի չափով;

11. Վահան Վլադիմիրի Վարդապետյանին նվիրատվություն՝ 1,000,000 ՀՀ դրամ գումարի չափով;

12. Մեսրոպ Լևոնի Մովսիսյան նվիրատվություն՝ 1,000,000 ՀՀ դրամ գումարի չափով;

13. Կարինե Ստեփանի Մինասյանին արտամարմնային բեղնավորում փոխնակ մոր միջոցով իրականացնելու նպատակով նվիրատվություն՝ 3,630,750 ՀՀ դրամ գումարի չափով;

14. ՀՀ-ում թվով 7 մանկատների համար նվեր-տուփերի ձեռքբերում և նվիրատվություն՝ 1,940,375 ՀՀ դրամ գումարի չափով: Մանկատների ցանկը և տրամադրված նվեր տուփերի քանակը ստորև.

N	Մանկատուն	2024թ-ի ընթացքում ձեռքբերված և տրամադրված գույքի արժեք		
		Քանակ	Գին	Գումար
1	ՀՕՖ-ի Երեխաների աջակցության ճգնաժամային կենտրոն հիմնադրամ	18	9,025	162,450
2	Նագաշյան մանուկների տուն	20	9,025	180,500
3	Միսիոներների Բարեգործական կազմակերպություն հայկական մ/ճ	19	9,025	171,475
4	Քյուրքչյան Երեխաների սոցիալական աջակցության կենտրոն	10	9,025	90,250
5	Տիրամայր Հայաստանի կուսատան կենտրոն	30	9,025	270,750
6	UOU-մանկական գյուղեր Իջևան մ/ճ	58	9,025	523,450
7	UOU մանկական գյուղեր Կոտայք մ/ճ	60	9,025	541,500
	Ընդամենը			**1,940,375**

15. Սոցիալապես անապահով ընտանիքներին անշարժ գույքի, կահույքի և կենցաղային տեխնիկայի նվիրատվություն՝ 323,134,736.33 ՀՀ դրամ գումարի չափով (գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև): 1-ից 14-րդ պարբերությունների մասով Հիմնադրամը հանդես է եկել որպես ֆինանսավորող:

N	Գույքի անվանումը	2024թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի արժեք			2024թ-ի ընթացքում շահառուին տրամադրված գույքի արժեք	
		Քանակ	Գին	Գումար	Քանակ	Գումար
1	Բնակարան (Արարատի մարզ, համայնք Մասիս, գյուղ Նոր Կյուրին, 21-րդ փողոց, 92 այգետնակ)	1	5,868,000	5,868,000	1	5,868,000
2	Բնակարան (Արարատի մարզ, համայնք Մասիս, գյուղ Նոր Կյուրին, 21-րդ փողոց, 90 այգետնակ)	1	7,823,000	7,823,000	1	7,823,000
3	Բնակարան (Արարատի մարզ, ք. Արտաշատ, Իսակովի փողոց 70/1, բն. 29)	1	23,501,000	23,501,000	1	23,501,000
4	Բնակարան (Շիրակի մարզ, ք. Գյումրի, Մուշ-2 թաղամաս, 7-րդ փողոց 10/1 շենք, բն. 3)	1	16,907,000	16,907,000	1	16,907,000
5	Բնակարան (Արմավիրի մարզ, Արաքսա համայնք, գ. Գրիբոյեդով, Ռաֆֆու փողոց, բն. 19)	1	21,625,000	21,625,000	1	21,625,000

6	Բնակարան (Կոտայքի մարզ, Հրազդան, Կենտրոն 32 շենք, բն. 126)	1	22,066,000	22,066,000	1	22,066,000
7	Բնակարան (Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Սարալանջի փողոց, 5-րդ շենք, բն. 29)	1	23,514,000	23,514,000	1	23,514,000
8	Բնակարան (Արարատի մարզ, Մասիս համայնք, 3-րդ թաղ. 3, 3 շենք, բն. 20)	1	21,647,000	21,647,000	1	21,647,000
9	Բնակարան (Արարատի մարզ, Արարատ քաղաք, Ա/Զ թաղ. 1 շենք, բն. 7)	1	18,271,000	18,271,000	1	18,271,000
10	Բնակարան (Արարատի մարզ, ք. Վեդի, Կասյան փողոց, 26/2, բն. 19)	1	21,449,000	21,449,000	1	21,449,000
11	Բնակարան (Արմավիրի մարզ, Բաղրամյան 21/1 շենք, թիվ 7 բնակարան)	1	21,719,000	21,719,000	1	21,719,000
12	Բնակարան (Արմավիրի մարզ, Մեծամոր համայնք 38 շենք, բն. 3)	1	20,350,800	20,350,800	1	20,350,800
13	Բնակարան (րմավիրի մարզ, ք. Արմավիր, Բաղրամյան 29/1 շենք 37 բնակարան)	1	22,860,400	22,860,400	1	22,860,400
14	Բնակարան (ք. Վաղարշապատ, Արագածի զանգված 11 շենք, 42 բնակարան)	1	28,983,700	28,983,700	1	28,983,700
15	Բնակարան (ք. Վանաձոր Չուխաջյան թաղամաս 28 շենք 28)	1	9,536,340	9,536,340		
16	Բնակարան (ք. Վանաձոր Ռուսթավի փողոց 9 շենք, 32 բնակարան)	1	11,088,890	11,088,890		
17	Նվեր-տուփ № 1 (մեծ)	11	60,000	660,000	11	660,000
18	Աթոռ հյուրասենյակի	60	11,666.67	700,000	60	700,000
19	Աթոռ խոհանոցի	32	5,000	160,000	32	160,000
20	Ավտոմատ լվացքի մեքենա SAMSUNG	7	159,000	1,113,000	7	1,113,000
21	Սպասք լվացող մեքենա SAMSUNG/TOSHIBA	11	150,000	1,650,000	11	1,650,000
22	Բազմոց փայտյա հիմքով կտորե պաստառով 3+1+1	3	300,000	900,000	3	900,000
23	Բազմոց փայտյա հիմքով կտորե պաստառով 3+1+1	1	310,000	310,000	1	310,000
24	Բազմոց փայտյա հիմքով կտորե պաստառով 3+1+1	1	320,000	320,000	1	320,000
25	Խոհանոցային կոմբայններ Bosch	7	105,570	738,991.72	6	738,991.72
26	Սեղան խոհանոցի	6	40,000	240,000	6	240,000
27	Ճաշասեղան	6	90,000	540,000	6	540,000
28	Սեղան ճաշի	1	120,000	120,000	1	120,000
29	Խոհանոցի կահույք	5	177,000	885,000	5	885,000
30	Համակցված զազօջախներ Electrolux	7	227,733	1,594,134.87	6	1,594,134.87
31	Հարիչ ELECTROLUX EKM3700	5	104,000	520,000	5	520,000
32	Հեռուստացույց SAMSUNG	8	158,000	1,264,000	8	1,264,000
33	Մահճակալ	5	45,000	225,000	5	225,000

34	Մահճակալ 90	14	55,000	770,000	14	770,000
35	Մահճակալ 90	3	60,000	60,000	3	60,000
36	Մահճակալ 5 հարկանի	5	130,000	650,000	5	650,000
37	Մահճակալ 160	1	115,000	115,000	1	115,000
38	Սառցարաններ Indesit	11	158,016	1,738,180.85	11	1,738,180.85
39	Միկրոալիքային վառարան SAMSUNG	11	44,000	484,000	11	484,000
40	Ներքնակ	36	36,927	1,329,400	36	1,329,400
41	Սառնարաններ Indesit	3	163,398	493,194.49	3	493,194.49
42	Սառնարան SAMSUNG	6	163,000	978,000	6	978,000
43	Փոշեկուլ SAMSUNG	10	32,000	320,000	10	320,000
44	Պլանշետ SAMSUNG X110 64GB	9	56,000	504,000	9	504,000
45	Պլանշետ SAMSUNG X110 64GB	2	57,000	114,000	2	114,000
46	Պլանշետ SAMSUNG X110 64GB	14	53,000	742,000		
47	Պուֆիկ	10	5,000	50,000	10	50,000
48	Վերանորգման աշխատանքներ և այլ ծառայություն		1,077,000	1,077,000.4		1,077,000.4
49	Նոտարական ծառայություններ		1,592,000	1,592,000		1,592,000
50	Հագուստ և սնունդ երեխաներին		2,847,704	2,847,704		2,847,704
	Ընդամենը			**323,134,736.33**		**301,767,506.33**

2024թ-ին շահառուին է հանձնվել նաև 2023թ-ին ձեռք բերված ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Նոր Թաղամաս 2 շենք, թիվ 22 բնակարանը, որի արժեքը կազմել է 27,749,667 ՀՀ դրամ:

16. Արտամարմնային բեղմնավորման համար աջակցություն՝ 32,588,000 ՀՀ դրամ գումարի չափով: Ընդ որում 2024թ-ի տարեսկզբի դրությամբ ծրագրին ուղղված վճարումներից մնացած կանխավճարների հանրագումարը կազմել է 823,250 ՀՀ դրամ: 2024թ-ի ընթացքում ծրագրի ֆինանսավորման համար վճարվել է ևս 31,764,750 ՀՀ դրամ:

17. ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքին տրանսպորտային միջոցների /հատուկ տեխնիկայի/ և աղբամանների նվիրատվություն՝ 116,748,000 ՀՀ դրամ գումարի չափով, որից 108,950,000 ՀՀ դրամը կազմում է 2023թ-ին ձեռքբերված, բայց դեռևս շահառուին չհանձնված գույքի արժեքը: Ձեռքբերված գույքն ամբողջությամբ հանձնվել է շահառուին 2024թ-ի ընթացքում:

2024թ-ի ընթացքում գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև.

N	Գույքի անվանումը	2024թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի արժեք			2024թ-ի ընթացքում շահառուին տրամադրված գույքի արժեք	
		Քանակ	Գին	Գումար	Քանակ	Գումար
1	Ավտոմեքենա ՈՒԱԶ 330365-612; vinXTT330365N1214615	1	7,400,000	7,400,000	1	7,400,000
2	Գազաբալոնային համակարգ, համակարգի տեղադրում	1	398,000	398,000	1	398,000
	Ընդամենը			**7,798,000**		**7,798,000**

18. Գյուղատնտեսական սարքավորումների ձեռքբերում և նվիրատվություն՝ գյուղացիներին աջակցելու նպատակով՝ 313,146,000 ՀՀ դրամ գումարի չափով (գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև).

N	Գույքի անվանումը	2024թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի արժեք			2024թ-ի ընթացքում շահառուին տրամադրված գույքի արժեք	
		Քանակ	Գին	Գումար	Քանակ	Գումար
1	Տրակտոր Բելառուս-82.1	12	9,400,000	112,800,000	12	112,800,000
2	Գութան ПЛН-3-35П	12	850,000	10,200,000	12	10,200,000
3	Ավտոմեքենա ՈՒԱԶ 330365-112	12	7,900,000	94,800,000	12	94,800,000
4	Գազաբալոնային համակարգ	12	388,000	4,656,000	12	4,656,000
5	Գազաբալոնային համակարգի տեղադրում	12	10,000	120,000	12	120,000
6	Անիվավոր տրակտոր LOVOL 354 խցիկով	12	4,000,000	48,000,000	12	48,000,000
7	Ակոսահան Ուրալեց ОК300	12	240,000	2,880,000	12	2,880,000
8	Գութան տրակտորի KERLAND 3,20՝ 3 խոփով	12	300,000	3,600,000	12	3,600,000
9	Խոտհնձիչ КУФ-2,1	12	320,000	3,840,000	12	3,840,000
10	Հողաֆրեզ 1 GQN-140	12	330,000	3,960,000	12	3,960,000
11	Սրսկման ապարատ AGROBELORUS թևերով	3	380,000	1,140,000	3	1,140,000
12	Սրսկման ապարատ AGROBELORUS տուրբո քամիարով	3	850,000	2,550,000	3	2,550,000
13	Հակեր հավաքող սարք՝Խոտամամլիչ HSA86	6	4,100,000	24,600,000	6	24,600,000
	Ընդամենը			**313,146,000**		**313,146,000**

2024թ-ի տարեսկզբի դրությամբ առկա, բայց դեռևս շահառուին չհանձնած գույքի գումարը կազմել է 31,494,000 ՀՀ դրամ, որը ևս հանձվել է շահառուին 2024թ-ին:

19. 2024թ-ի ընթացքում «Բարերար ԷՅԷՄ» ծրագրի ֆինանսավորման համար վճարվել է ընդամենը 27,696,634 ՀՀ դրամ գումար, որից 7,300,000 հազար դրամ կազմել են «Բարերար ԷՅԷՄ» կայքի պատրաստման ծախսեր: 2024թ-ի տարեսկզբին ծրագրի մնացորդը կազմել է 2,000,000 ՀՀ դրամ:

20. Լսողական սարքերի ձեռքբերում 60,780,912 ՀՀ դրամ գումարի չափով: 2024թ-ին հանձնված լսողական սարքերի արժեքը կազմել է 9,975,880 ՀՀ դրամ:

21. Բարեգործական ծրագրերի մասով նյութերի հեռարձակում՝ 66,719,250 ՀՀ դրամ գումարի չափով:

22. Մասիս համայնքի խաղահրապարակի համար 4,000,000 ՀՀ դրամի չափով խաղային համալիրների և ճոճանակների ձեռքբերում, մոնտաժում և տեղադրում:

23. ՀՀ, ք. Երևան, Հրանտ Վարդանյան փողոցի վերանորգման համար 2,060,000 ՀՀ դրամի չափով գումարի տրամադրում:

24. «Արմավիրի Տիգրան Մեծ ռազմամարզական հատուկ վարժարան» ՊՈԱԿ-ին գույքի, կահույքի, կենցաղային տեխնիկայի նվիրատվություն՝ 70,152,026 ՀՀ դրամ գումարի չափով (գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև).

N	Գույքի անվանումը	2024թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի արժեք			2024թ-ի ընթացքում շահառուին տրամադրված գույքի արժեք	
		Քանակ	Գին	Գումար	Քանակ	Գումար
1	Տարբերանշան	2	20,292	40,584	2	40,584
2	Վերանորոգման աշխատանքներ	1	10,871,105	10,871,105	1	10,871,105
3	Բեռնափոխադրում	1	1,787,354	1,787,354	1	1,787,354
4	Մեքենայի կշռում	1	19,000	19,000	1	19,000
5	Մետաղապլաստե պատուհաններ և դուռ	1	3,469,311	3,469,311	1	3,469,311
6	Ջեռուցման համակարգի պահեստամասեր	1	1,781,000	1,781,000	1	1,781,000
7	Միջքաղաքային ավտոբուս	1	17,401,657	17,401,657	1	17,401,657
8	Մարզագույք	1	31,345,945	31,345,945	1	31,345,945
9	Ռեզինե հատակ	1	3,436,070	3,436,070	1	3,436,070
	Ընդամենը			**70,152,026**		**70,152,026**

25. «Արամ Մանուկյանի անվան մարզառազմական մասնագիտակցված վարժարան» ՊՈԱԿ-ին գույքի և շինարարական վերանորոգման արդյունքների նվիրատվություն՝ 48,609,797 ՀՀ դրամ գումարի չափով (գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև).

N	Գույքի անվանումը	2024թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի արժեք			2024թ-ի ընթացքում շահառուին տրամադրված գույքի արժեք	
		Քանակ	Գին	Գումար	Քանակ	Գումար
1	Միջքաղաքային ավտոբուս SAZ NP26 Նույնացման համար (VIN NSANPR66PRS302524) Նույնացման համար (VIN NSANPR66PRS302526)	2	17,437,377	34,874,754	2	34,874,754
2	Մարզասարք R17 ABDUCTORS S/N*506/31/09	1	966,452	966,452	1	966,452
3	Մարզասարք R18 ABDUCTORS S/N*507/31/09	1	966,452	966,452	1	966,452
4	Մարզասարք R50 LEG cURL S/N-508/31/09	1	966,452	966,452	1	966,452
5	Մարզասարք R46 BUTTERFLY RHOMBOLDES S/N*501 /31/09	1	1,104,516	1,104,516	1	1,104,516
6	Մարզասարք R11 HIPS S/N*505/31/09	1	905,966.4	905,966.4	1	905,966.4
7	Մարզասարք R81 ABDOMINAL CRUNCH/LOWER вАск S/N-	1	1,051,263.2	1,051,263.2	1	1,051,263.2

	504/31/09					
8	Մարզասարք R53 TRICEPS S/N*502/31/09	1	966,452	966,452	1	966,452
9	Մարզասարք R80 LAT PULLEY/SEATED CHEST PRESS S/N*503/31/09	1	1,104,516	1,104,516	1	1,104,516
10	Մարզասարք R14 LEG EXTENSION S/N*508/31/09	1	788,940	788,940	1	788,940
11	Մարզասարքի պարագա CS2 AIR COMPRESSOR FOR 5 MACHINES	2	994,168	1,988,336	2	1,988,336
12	Շինարարական վերանորոգման աշխատանքներ	1	2,925,697.4	2,925,697.4	1	2,925,697.4
	Ընդամենը			**48,609,797**		**48,609,797**

26. ՀՀ ԱՆ «Այրվածքաբանության և մաշկաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ին բժշկական գույքի և սարքավորումների նվիրատվություն՝ 117,324,380 ՀՀ դրամ գումարի չափով (գույքի ձեռքբերման և տրամադրման վերաբերյալ տեղեկատվական աղյուսակը՝ ստորև).

N	Գույքի անվանումը	2024թ-ի ընթացքում ձեռքբերված գույքի արժեք			2024թ-ի ընթացքում շահառուին տրամադրված գույքի արժեք	
		Քանակ	Գին	Գումար	Քանակ	Գումար
1	Վիրահատական սեղան (Electric operating table) A301(SKL-A)	1	2,598,400	2,598,400	1	2,598,400
2	Վիրահատարանի լույսեր FAMED HELIOS 160 Lighthead	1	4,361,000	4,361,000	1	4,361,000
3	Անեսթեզիոլոգիական ապարատ APUS x3 The fully electronic Anesthesia Workstation	2	10,902,500	21,805,000	2	21,805,000
4	Պացիենտ մոնիտոր CETUS xl Advanced Multi-Parameter Patient Monitor for ICU/NICU, CCU and OR Applications	1	1,246,000	1,246,000	1	1,246,000
5	Դեֆիբրիլյատոր Axion DN 11 Professional	1	1,583,400	1,583,400	1	1,583,400
6	Բրոնխոսկոպ VME-5B PORTABLE Video bronchoscope	1	4,872,000	4,872,000	1	4,872,000
7	Վիդեոլարինգոսկոպ Heine Visionpro Videolarygoscope	1	1,557,500	1,557,500	1	1,557,500
8	ՈՒԶՀ LOGIQP9 Xdclear	1	23,548,000	23,548,000	1	23,548,000
9	Մանրադիտակ միկրովիրաբուժական Leica M320 microscope	1	33,375,000	33,375,000	1	33,375,000
10	Չորօդային պահարան Hot Air Sterilizer HAS-T105 105L	1	1,238,300	1,238,300	1	1,238,300
11	Վիրահատական սեղան բուժքույրական SKH038-2 Mayo Trolley	1	60,900	60,900	1	60,900
12	Ավտոկլավ Vertical Autoclave--- BKQ-B II -100L	1	1,624,000	1,624,000	1	1,624,000
13	Մանրէազերծ բժշկական իրերի պահպանման պահարան	1	52,780	52,780	1	52,780
14	Հիվանդի տեղափոխման պատգարակ	2	406,000	812,000	2	812,000

15	Ավտոմատ իմունոլոգիական վերլուծիչ TOSOH AIA-360 Automated Immunoassay Analyzer	1	6,897,500	6,897,500	1	6,897,500
16	Օրթոպեդիկ վիրաբուժական ուժային գործիք՝ Սղոց	1	1,542,800	1,542,800	1	1,542,800
17	Օրթոպեդիկ վիրաբուժական ուժային գործիք՝ Գայլիկոն	1	1,542,800	1,542,800	1	1,542,800
18	Կոագուլյատոր	1	8,277,000	8,277,000	1	8,277,000
19	Օդորակիչ, տեղադրում	1	330,000	330,000		330,000
	Ընդամենը			**117,324,380**		**117,324,380**

27. Հրանտ Վարդանյանի 75 ամյակի կապակցությամբ Գրանդ Հոլդինգի կազմակերպությունների աշխատակիցներին նվիրատվություն՝ 153,256,836 ՀՀ դրամ գումարի չափով:

28. Տավուշի մարզի Բերդ, Նոյեմբերյան, Իջան համայնքներին դրամական նպատակային նվիրաբերություն 113,963,618 ՀՀ դրամ գումարի չափով՝ գազաֆիկացման և խմելու ջրի վերանորոգման համաֆինասավորման համար:

Հիմնադրամի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Հրանտ Վարդանյան 6:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատակիցների թվաքանակը կազմել է 24 մարդ (2023՝ 23 մարդ):

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 24.06.2025 12:37